

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

Պեսպես յիսկումներով անշնչացած մարդը կենդանացրնելու համար ընելու առաջին հարկաւոր դարմանները :

Անշնչութիւն կըսուի այն կարծեցեալ մահը՝ որով մարդ իրօք մեռած չլինիր, այլ միայն շունչը բռնուած եւ կամ արեան շրջանը դադրած կլինի քիչ մը ժամանակ :

Անշնչութեան առաջին դարմանները տեսակ տեսակ կրնան լինել՝ անոր պէսպէս պատճառներուն համեմատ :

Ջրի մէջ խզողւած մարդը կենդանացնելու համար պէտք է վերցնել զինքը զգուշութեամբ, այնպէս որ գլուխը ոչ չափէ գուրս դէպ ի ետեւ ընկնի եւ ոչ չափազանց կուրծքին վրայ ծռի. անկողնի մը վրայ պառկեցնելու է աջ կշտին վրայ, գլուխը քիչ մը ցած. եւ փորը պէտք է ճնշել վարէն դէպ ի վեր, որպէս զի կլլած ջուրը բերնէն ետ գայ : Եթէ այս ճնշմունքը բաւական չլինի, կարելի է մարմինը սաւանի մը մէջ օրելով երեք-ցրնել, բայց ամէն ժամանակ նայելու է որ գլուխը ցած եւ ոտքերը բարձր չլինին : Պէտք է հիւանդը հանուեցնել, եւ բրդեղենի կտորով մը կամ վրձինով բոլոր մարմինը շփել, մանաւանդ կոնակը՝ փորը՝ թեւերն ու սրունքը. վրձինը կարելի է նաեւ օղիի մէջ թրջել ու այնպէս շփել : Եթէ երեսը կապուտ կած լինի, պէտք է արիւն առնուլ, յետոյ փորին վրայ ջուր կաթեցնել եւ անուշադրի ոգիք հոտուրտացնել. պէտք է մեծ ամանի մէջ ջուր լեցնել, հիւանդը մէջը դնել եւ ջուրը աստիճանաբար տաքցնել, եւ կամ անոր տեղը սպունդը տաք ջրի մէջ թաթխել ու մարմնոյն վրայ ստէպ ստէպ փոփոխելով դնել. երբոր հիւանդին բերնէն փրփուր ելնէ եւ փորը կրկնայ, կամ սիրտը սկսի զարնել, նշան է թէ կենդանանալու վրայ է : Եթէ հիւանդը կրնայ բերանը բան առնուլ, ջանալու է որ սիրտը ետ

գայ, եւ յետոյ հոփմանի ոգիք տալու է քանի մը կաթիլ, կամ գաւաթ մը չայ. եթէ հանգիստ քնանայ հիւանդը եւ թեթեւ կերպով մը քրտնի, լաւ նշան է. իսկ եթէ անհանգիստ լինի, նշան է որ ջերմ կայ վրան :

Սառած մարդը առողջացնելու համար ամենայն կերպով զգուշալի է որ ամենեւին տաք տեղ չտարուի եւ վրան տաք ջուր չլցուի. ընդհակառակն պէտք է սառած մարդը ցուրտ տեղ դնել. Առաջ պէտք է վրայի հագուստները կտրտել, որպէս զի կարենաս առանց անգամները շարժելու հանել զանոնք. յետոյ ձիւնի վրայ պէտք է դնես եւ մարմինը ձիւնով շփես, կամ թէ պաղ ու կէս սառած ջրի մէջ խոթես եւ 5 կամ 10 վայրկեանէն աւելի չթողուս մէջը : Կարելի է նաեւ պաղ ջրի մէջ թաթխած կաւով մարմինը ծածկել ու շփել, յետոյ սրբելով անկողնի մը վրայ պառկեցնել ու բրդեղենի կտորով մը անգագար շփել : Երբոր մարմինը շփելով կակըղնայ, պէտք է բերանը բանալ որ սկսի շունչ առնուլ, եւ ասոր համար ականջներուն ետեւի կողմը պէտք է շփել ձէթով կամ օղիով, եւ բերնին մէջ օդ մը տցնել փուքով եւ կամ խողովակով մը փչելով. կարելի է նաեւ գաղջ ջրով եւ կամ երիցուկի կամ ծխախոտի ջրով գրեխ տալ : Երբոր սառած մարդը կսկսի շունչ առնուլ, պէտք է իրեն երիցուկի չայ խմցնել, քիչ մը տաքցուցած տեղ տանել, եւ մարմնոյն վրայ գաղջ ջրի մէջ թրջած լաթեր դնել : Եթէ հիւանդը գլխու ցաւ կամ ջերմ ունենայ, պէտք է վզին վրայ տգրուկ դնել, կամ թեւէն արիւն առնուլ եւ գլուխը պաղ ջրով թրջել : Ընդհանրապէս ինչ դարման ալ ընես, հարկաւոր գիտելիքն այս է որ միշտ

պաղէն սկսելու է, ու տաքութիւնը կամաց կամաց աստիճանաբար աւելցընելու է: — Ինչ որ մինչեւ ցայժմ բոլոր մարմնոյն համար ըսինք, նոյնը պէտք է ընել նաեւ երբոր մէկ անգամը միայն սառած է, այսինքն առաջ ձիւնով շփել, եւ այլն:

Կախուկելով խզգուած մարդը կենդանացընելու համար՝ պէտք է զինքը առանց ցընցելու բաց տեղ դնել, գլուխը բարձր. հանուեցընել ու առատ արիւն առնուլ: Կարելի է, արեան շրջանը շարժելու եւ շնչառութիւնը սկսել տալու համար մարմինը շփել, եւ փսոզական դեղ ու գրեխ տալ: — Եթէ վզին վրայ չուանին տեղը ոչ կարմիր է եւ ոչ կապոյտ, այլ մորթի գունով, նշան է թէ մարդը առաջ մեռած է ուրիշ պատճառով մը, եւ յետոյ կախուած է:

Կայծակէ զարնուած մարդուն վրայ եթէ

կենդանութեան նշան տեսնուի, պէտք է զինքը բաց օդի մէջ դնել, երեսը ջուր փչել եւ մարմինը բրդեղէն լաթով մը շփել: Ռամկաց մէջ սովորութիւն մը կայ, որ գէշ չէ, այսինքն փոս մը փորել ու հիւանդը անոր մէջ թաղել մինչեւ վիզը. բայց նայելու է որ փոսը քովնտի փորուի եւ մարմինը աջ կշտին վրայ ծռած դրուի. իսկ արիւնն այն ատենը միայն պէտք է առնուլ, երբ յայտնի տեսնուի թէ արիւնը գլխուն զարկած է:

Ածուխէ կամ կրակէ զարնուած ու անշնչացած մարդը պէտք է բաց օդի հանել՝ հանուեցընել, նստեցընել, երեսին ու կուրճին պաղ ջուր սրսկել, արիւն առնուլ ոտքէն՝ երբեմն նաեւ վզէն, մարմինը քացախով շփել, քացախով գրեխ տալ, բերնին մէջը փչել որ շնչառութիւնը սկսի, եւ եթէ յաջողի՝ լեմոնաջուր խմցընել:

Բ Ա Ն Ա Լ Ի Բ Ն Ա Կ Ա Ն Գ Ի Տ Ե Լ Ե Ա Յ

ԲԵԿՏՈՒՄՆ ԼՈՒՍՈՅ.

(Նարայարութին)

Ի՞նչ է գոյնը:

— Մէկ առարկայէ մը ցլացած լուսոյն մարդուս աչքին վրայ ըրած տպաւորութիւնն է:

Ինչո՞ւ համար ծովուն գոյնը երբեմն կանաչ կերելի:

— Վասն զի Ա, ջուրը կապոյտ գոյնը ետ կցուցընէ, եւ կանաչը կծրծէ ու աւազին կհաղորդէ. անով աւազը կանաչ կերելի, եւ անոր Ֆառագայթները նորէն ջրին մէջէն անցնելով՝ կանաչ գոյնը աւելի շատ կտեսնուի քան թէ ջրին բնական կապոյտ գոյնը.

Բ. երբոր ջուրը շատ խոր չէ, ծովուն տակի դեղին աւազէն ցլացած լոյսը կապուտին հետ կխառնուի ու այնպէս կհասնի մեր աչքին՝ կանաչ երեւելով:

Ամպերուն շուքն ալ շատ կփոփոխէ ծովուն գոյնը:

Ինչո՞ւ համար ծովուն գոյնը տեղ տեղ դեղին կերելի, տեղ տեղ ալ կարմիր.

— Վասն զի տակի աւազը տեղ տեղ սաստիկ դեղին կլինի, տեղ ալ կայ որ կարմրագոյն է:

Բնութեան մէջի նիւթերէն ոմանք ինչո՞ւ սեւ են, եւ ոմանք Ֆերմակ:

— Վասն զի ոմանց վրայ զարկած լուսոյ բոլոր Ֆառագայթներն ալ նոցա մէջ կընկղմին, ուստի սեւ կերելին. ոմանք ալ իրենց վրայ զարկած Ֆառագայթներուն ամէնն ալ ետ կցուցընեն, եւ Ֆերմակ կտեսնուին:

Ինչէն է որ մարմիններէն ոմանք կարմիր են, ոմանք կապոյտ եւ ոմանք դեղին .

— Վասն զի ոմանք կարմիր ճառագայթները միայն ետ կցուցընեն, եւ մէկալ գոյները կծրծեն. ոմանք ալ կապոյտ կամ դեղին ճառագայթները միայն կցուցընեն, եւ մէկալները կծրծեն :

Ուսկից կուգայ մարմնոց այս յատկութիւնն որ այս կամ այն ճառագայթը ետ կցուցընեն ու մէկալները կծրծեն :

— Իրենց երեսին կազմութենէն եւ բնական շէնքին բնաւրձական բաղադրութենէն :

Ոսկորը ինչո՞ւ ճերմակ է .

— Վասն զի անհամար մանր խողովակներէ կազմուած է, որ անոնք ամէնն ալ ընդունած լոյսերնին ետ կցուցընեն եւ մէկ ճառագայթ մըն ալ չեն ծրծեր : Այս խողովակները այնչափ մանր են որ 600 հատը հազիւ թէ մէկ մազի հաստութիւն կունենան :

Ինչէն է որ ձիւնը, աղը, շաքարը, բամբակը եւ ասոնց նման շատ նիւթեր ճերմակ են .

— Վասն զի ասոնք անհամար մանր բիւրեղներէ եւ կամ այնպիսի մասնիկներէ ձեւացած են որ ընդունած լոյսերնին բոլորովին ետ կը ցուցընեն :

Բուսոց տերեւները ինչո՞ւ կանաչ են .

— Վասն զի անոնց մէջ գունաւոր հիւթ մը կայ որ *քուսաներկ* կըսուի, եւ այս գոյնը օդոյն թթուածինը ծծելով կսնանի :

Ինչո՞ւ համար բոյսերը նոր ծլած եւ ետքը հնացած ատեննին գունաթափ կլինին .

— Վասն զի անոնց բուսաներկը կամ տիպա կլինի եւ կամ պակասած :

Ինչէն է որ օդ չառնող բոյսերը կանաչութիւն չեն ունենար .

— Վասն զի օդէն թթուածին չեն ծծեր որ իրենց բուսաներկը սնունդ առնուի :

Պտուղներուն այլ եւ այլ գոյներ ունենալուն պատճառն ի՞նչ է .

— Իրենց մէջի գունաւոր կամ ներկի նման հիւթերն են :

Ինչպէս կլինի որ ծծմբուտ թթուն պտղոց բիծերը լաթերուն վրայէն կհանէ .

— Վասն զի այն գունաւորող նիւթերը կըլուծէ՝ առանց լաթերը փճացընելու :

Նայելու է որ ետքէն լաթը լուացուի . ապա թէ ոչ՝ ածխային թթուն կրնայ լաթին թելերը փտտեցընել :

Ինչէն է որ ճրագի լուսով՝ կապոյտ գոյները կանաչ կերեւին .

— Վասն զի բոցին լոյսը դեղին է, եւ կասուին հետ որ խառնուի՝ կանաչ կլինի :

Շինծու գոյները կամ ներկերը երբոր երկար ատեն օդ տեսնեն՝ ինչո՞ւ կնետեն ու կփճանան .

— Վասն զի Ա, Յ, Օդէն թթուածին կծրծեն, առնով կերպով մը կայրին ու գոյներնին կնետեն .

Բ. Արեւուն տաքութեամբն ու լուսովը ներկերէն ոմանք կընկղմին կամ կլուծուին .

Գ. Երբեմն օդոյն խոնաւութիւնը եւ փոշին ներկերուն գոյնը կաւրեն :

Դոյնը ձայնին հետ ի՞նչ նմանութիւն ունի .

Ինչպէս որ լարի մը հաստութենէն՝ հանած ձայնը կփոփոխի, այսպէս ալ ո՛ր եւ իցէ թիթեղ թանձր կամ բարակ լինելուն համեմատ՝ այլ եւ այլ գունով կերելի, ինչպէս սապոնի պղպջակները : Բարակ ու ձիգ լարը սուր ձայն կհանէ . բարակ թիթեղն ալ կապոյտ ու մանուշակագոյն կերելի . հաստ ու թոյլ լարը հաստ ձայն կհանէ, թանձր թիթեղն ալ կարմիր գոյն կունենայ : Սեւ մակերեւոյթը՝ լուսոյ կողմանէ՝ ձայն չհանող նիւթերուն կնմանի :

ՄԵՏԱՂԱՏԵՍԱԿԻ ԵՒ ՄԵՏԱՂՔ.

Բնութեան մէջի զանազան մարմինները ի՞նչպէս կբաժնուին ըստ բնաւրձից .

— Պարզ եւ բաղադրեալ մարմիններ :

Բաղադրեալ մարմինը ո՞րն է .

— Բաղադրեալ կըսուին այն մարմինները՝ որոնցմէ այլ եւ այլ գոյացութիւններ կրնան ել-